Մ.ՇԱՐՈՅԱՆ

ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Ուսումնական ձեռնարկ հանրակրթական ավագ դպրոցի10-11-րդ դասարանների համար

«Մխիթար Սեբաստացի»

2013

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հանրակրթական ավագ դպրցի 10-11-րդ դասարաններ համար

Հեղինակ՝ Մ. Շարոյան
Նախագծի խորհրդատու՝ Լ. Ալեքսանյան
Խմբագիր՝ Լ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Մ. Շարոյան
Նկարիչ՝ Ս. Շարոյան
Ձևավորումը՝ Ս. Շարոյան
Շարվածքը՝ Մ. Շարոյան

Ծանոթագրում: Ավագ դպրոցի 11-րդ դասարնի սովորող Մերի Շարոյանի ստեղծած «Սոցիոլոգիա» ուսումնական ձեռնարկը բաղկացած է 24 էջից, երեք մասից: Նախատեսված է հանրակրթական ավագ դպրցի 10-11-րդ դասարանների համար: Հեղինակը փորձել է նշված տարիքային խմբի համար ստեղծել մատչելի ուսումնական ձեռմակ, որի իր մեջ ներառում է կիրառական սոցիոլոգիայի հիմնական բաղկացուցիչներ:

Հեղինակի կողմից

Սոցիոլոգիա, ուսումնական ձեռնարկ հանրակրթական ավագ դպրոցի10-11-րդ դասարանների համար: Ե.; «Մխիթար Սեբաստացի» հրատ., 2013, 24 էջ:

Էլեկտրոնային գիրքը նախատեսված է հանրակրթական ավագ դպրցի 10-11-րդ դասարանների համար: Հեղինակը փորձել է նշված տարիքային խմբի համար ստեղծել մատչելի ուսումնական ձեռմակ, որի իր մեջ ներառում է կիրառական սոցիոլոգիայի հիմնական բաղկացուցիչները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից…….4

Մաս 1

Սոցիոլոգիայի զարգացման փուլերը ……...7

Մաս 2

Կ իրառական սոցիոլոգիա……13

2.1. Տեղեկատվություն հավաքելու մեթոդները……14

Դիտման մեթոդ, հարցման մեթոդ, հարցազրույցի մեթոդ, փաստաթղթերի վերլուծության մեթոդ, Ֆոկուս խումբ:

2.2 Հարցաշարի կառուցվածքը, հարցերի տեսակները…18

2.3. Սոցիոլոգիական հետազոտության փուլերը, ծրագիրը, ընտրանքը……...20

Մաս 3

Ուսումնասիրություններ…….22

Օգտագործված գրականության ցանկ……..…….....23

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ինչի՞ համար է պետք և ի՞նչ է ուսումնասիրում սոցիոլոգիա գիտությունը:

«Սոցիոլոգիա» բառը առաջացել է լատիներեն societas – հասարակություն և հունարեն logos – ուսմունք բառերից ստուգաբանորեն նշանակում է գիտություն հասարակության մասին:

Սոցիոլոգիայի շնորհիվ զանազան մեքենաներ և շարժիչներ չեն ստեղծվում, այն չի նպաստում թեթև և ծանր արդյունաբերության զարգացմանը կամ քիմիական առաջընթացին: Սոցիոլոգիան որոշակի նյութական բարիք չի տալիս, սակայն այն ունի բավականին կարևոր նշանակություն: Սոցիոլոգիայի շնորհիվ կարելի է պարզել հասարակության միտվածությունը, գաղափարները, նախընտրությունները: Սոցիոլոգիական ամենապարզ հարցումների միջոցով կարելի է պարզել, թե, օրինակ, ինչ ապրանքանիշ է նախընտրում հասարակության այս կամ այն խավը և այլն: Կարելի է նման շատ օրինակներ բերել, քանի որ սոցիոլոգիան սերտորեն կապված է տնտեսագիտության, քաղաքագիտության, մարկետինգի և մի շարք այլ գիտությունների հետ: Անցնենք հաջորդ հարցին. ի՞նչ է ուսումնասիրում սոցիոլոգիան: Փորձենք տալ ամենապարզ սահմանումը՝ սոցիոլոգիան հումանիտար գիտություն է մարդկային հասարակության մասին: Բայց այս սահմանումը բավականին անորոշ է և ամբողջովին չի ընդգրկում առարկայի նկարագրությունը: Փորձեմ սկզբում ներկայացնել

սոցիոլոգիայի իմ սահմանումը: *Ըստ ինձ՝ սոցիոլոգիան հումանիտար գիտություն է, որն ուսումնասիրում է հասարակությունը, վերջինիս առաջընթացի ուղղությունը և նախադրյալները, օգնում կանխատեսումներ անել ապագայի վերաբերյալ՝ վերլուծելով անցյալի և ներկայի իրավիճակը:* Սոցիոլոգիան համեմատաբար երիտասարդ գիտություն է՝ փոփոխման և զարգացման ընթացքի մեջ:

Ստորև ներկայացված են սոցիոլոգների կողմից առաջարկված սահմանումներ:

Համաձայն ռուս սոցիոլոգ Գրիցիանովի՝*սոցիոլոգիան հասարակության կայացման ու զարգացման օրինաչափությունների և դրա գործառնության առանձնահատկություններիմասին գիտություն է:*

Մեկ այլ հայտնի սոցիոլոգ՝ Էնթոնի Գիդդենսը կարծում է, որ *սոցիոլոգիան մարդու հասարակական կյանքի, խմբերի և հասարակությունների հետազոտման գիտություն է:*

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրը այն եզակի հանրակրթական ուսումնական հաստատություններից է, որտեղ ուսուցանվում է կիրառական սոցիոլոգիա առարկա:

Բնավ պարտադիր չէ սոցիոլոգ դառնալ՝ հասարական տարբեր օրինաչափություններ վերլուծելու համար: Երբ սովորողն այս առարկայի հիմքն ուսումնասիրում է դեռևս դպրոցում՝ անկախ նրա մասնագիտական կողմնորոշումից, նա սկսում է վերլուծել հասարակական հարաբերություններն ու նրանում տեղի ունեցող տարբեր օրինաչափությունները, մեր կյանքի կարևոր բաղկացուցիչ մասերը:

«Սոցիոլոգիա» գիտության ուսումնասիրությունն անհրաժեշտ է քաղաքացիական հասարակության ձևավորման, հասարակության՝ սոցիումի մասին

պատկերացում կազմելու և գրագետ ուսումնասիրություններ անցկացնել կարողանալու համար:

Սակայն, կա մի խնդիր. ավագ դպրոցի համար նախատեսված սոցիոլոգիայի հայալեզու ձեռնարկ-դասագրքի բացակայությունը: Իհարկե, կան սոցիոլոգիայի և սոցիոլոգիական հետազոտությունների մասին շատ լավ հայալեզու գրքեր՝ գրված հայտնի սոցիոլոգների կողմից, սակայն կոնկրետ 14-15 տարեկան սովորողի համար նախատեսված դասագիրք, որը մատչելի և հետաքրքիր կլիներ ընկալման համար՝ ցավոք, չկա:
Այդ իսկ պատճառով ես՝ որպես ավագ դպրոց-վարժարանի 11-րդ դասարանի սովորող, ով ավագ դպրոց-վարժարանում ուսումնասիրել է կիրառական սոցիոլոգիայի հիմունքները, այդ առարկան դասավանդող Լուսինե Ալեքսանյանի խորհրդատվությամբ նախաձեռնել ենք այս ձեռնարկը, որը հիմնված է ուսումնական տարվա ընթացքում կատարված գործնական աշխատանքների վրա:

Կարծում ենք՝ այն բավական մատչելի և հասկանալի է սոցիոլոգիայի մասին նախնական պատկերացում կազմելու համար:

Սիրելի սովորող կամ սոցիոլոգիայով հետաքրքրված անձ, հուսով ենք, մեր կազմած ձեռնարկը օգտակար կլինի քեզ համար:

ՄԱՍ 1

ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

«Սոցիոլոգիա» տերմինը առաջին անգամ օգտագործել է ֆրանսիացի փիլիսոփա Օգյուստ Կոնտը՝ 19-րդ դարի 30-ական թվականներին: Ցանկացած գիտությունը համարում է գիտություն, երբ այն ընումվումէ գիտական հանրության կողմից: Չնայած սոլոգիայի համար դա տեղի է ունեցել 19-րդ դարի 40-ական թվականներին, սակայն սոցիոլոգիական մտքեր, կանխատեսումներ արվել են շատ ավելի վաղ՝ անտիկ շրջանում: Սոցիոլոգիայի պատմությունը բաժանվում է երեք փուլերի. *1. հին աշխարհ, 2. միջնադար և նոր ժամանակներ (4-18-րդ դդ), 3. ժամանակակից, այսինքն 19-20-րդ դդ:*

Ամենաընդհանուր ձևով սոցիոլոգիան գիտություն է հասարակության, որպես ամբողջական համակարգի, նրա բաղադրատարրի (անձ, սոցիալական հանրույթ, ինստիտուտներ) միջոցով այդ համակարգի գործառման ու զարգացման մասին:

Մարդկությունն իր ամբողջ զարգացման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձնում այն կառույցին, որում ապրում է և որն ինքն էլ ստեղծել է՝ հասարակությանը: Ինչի՞ համար է պետք հասարակությանը, ի՞նչ է այն իր բնույթով, ինչպիսի՞ն է վերջինիս համակարգը: Հասարակության մասին եվրոպական առաջին տեսություններն առաջացել են անտիկ մշակույթում: Շրջադարձային նշանակություն ունեցող առաջին տեսություններն առաջ են քաշել հին հույն փիլիսոփա-

գիտնականներ Պլատոնը և Արիստոտելը դեռևս մ.թ.ա. IV դարում: Պլատոնի հասարակական-քաղաքական հայացքները լիովին ներկայացված են «Պետություն» ստեղծագործությունում: Պլատոնը լավագույն կառավարման ձևը համարում էր արիստոկրատիան, իսկ հասարակությանը և անհատին դիտարկում որպես միմյանց լրացնող համակարգեր: Նրա տեսության համաձայն՝ մարդկությունը պարտավոր է ստեղծել իդեալական հասարակական համակարգ, որտեղ հասարակությունը կբաժանվի երեք շերտի՝ աշխատավորներ, զինվորներ և փիլիսոփաներ-կառավարիչներ (ասել է թե՝ մտավորական էլիտա): Եվ եթե հասարակության ներքին՝ աշխատավորների խավը կարող է իրեն թույլ տալ մարդկային կրքեր՝ սեր, ընտանիք և այլն, ապա մյուս երկուսը պետք է կազմվեն հատուկ ընտրված մարդկանցից և բարոյականության օրինակ ծառայեն:
Արիստոտելն առաջ է քաշում լրիվ այլ տեսություն: Նա առողջ հասարակության հիմքը համարում է միջին խավը, որից բացի, կան երկու խավեր՝ հարուստ պլուտոկրատիա և չքավորներ: Պետությունը լավագույնս կառավարվում է միայն այն դեպքում, երբ չքավորներն առանձնացված չեն պետական համակարգից, պլուտոկրատիայի եսակենտրոն նկրտումները սահմանափակված են, իսկ միջին խավը ամենաբազմամարդն ու ուժեղն է: Նա տեսնում է հասարակության կատարելագործումը մարդկանց բարոյականության աճի, այլ ոչ թե մշտական վերահսկման մեջ:
Այս երկու տեսություններն էլ դարձան քաղաքականության, հասարակագիտության և փիլիսոփայության հիմքը: Ընդունված է անվանել, որ Արիստոտելի հասարակությունը բնական է, այն ինչ Պլատոնի առաջարկածը՝ արհեստական:

Վաղ միջնադարից սկսած մարդկանց մտավոր ներուժն ուղղվեց հոգու և կրոնի ուսումնասիրմանը՝ անտեսելով քաղաքագիտությունն ու հասարակագիտությունը և ստեղծեց նոր մտածելակերպ ունեցող մարդուն: Պետության դերում հանդես է գալիս աշխարհը, մարդը աշխարհի քաղաքացի է: Ժամանակաշրջանի ոգով հասարակական տեսություն ստեղծեց Նիկոլո Մաքիավելին 15-16-րդ դարերում: Նա ստեղծեց հասարակության և պետության մասին նոր, յուրահատուկ տեսություն՝ իր «Տիրակալը» գրքում նկարագրելով հզոր պետության ստեղծման և կայացման համակարգը: Համակարգ, որ կկարգավորեր քաղաքական գիտակցություն չունեցող ժողովուրդի հասարակությունը: Պետության շահերը ավելի բարձր էր դասվում, քան մարդու ազատությունը: Ընդունված է կարծել, որ հենց այսպես կատարվեց շրջադարձային անցումը քրիստոնեական ուտոպիայից դեպի քաղաքական իրականություն:

Հաջորդ խոշոր մտածողը Թոմաս Հոբսն (1588—1679) էր, ով իր «Լեվիաֆան կամ պետության և եկեղեցու Մատերիան, ձևը և իշխանությունը ստեղծագործությունում զարգացնում է հասարակագիտությունը՝ հասարակական պայմանագրի տեսականը ձևավորելով: Հոբսը համարում է, որ բարձրագույն իշխանությունը՝ անկախ իր բնույթից, պետք է անփոփոխ և լեգիտիմ լինի, հասարակությունը՝ քաղաքացիական: Հարկ է նշել նաև հասարակագիտության վրա մեծ ազդեցություն թողած այնպիսի մտածողների, ինչպիսիք են Ջոն Լոկը, Մոնտեսքյոն, Վոլտերը, Տյուրգոն, Վիկոն, Ռուսոն: Ջոն Լոկը առաջ էր քաշում լոգիկային ենթարկվող պետության գաղափարը, որտեղ նպատակը ազատությունն ու բնականությունն էին: Տյուրգոն հավատում էր սոցիալական պրոգրեսին: Սակայն սոցիոլոգիան

որպես ինքնուրույն գիտություն ձևավորվել է միայն XIX դարում՝ անջատվելով փիլիսոփայությունից: «Սոցիոլոգիա» տերմինը գիտություն ներմուծել է Օգյուստ Կոնտը 1842 թ: Առաջին սոցիոլոգներից էին Հերբերտ Սփենսերը, Լյուդվիգ Գումպլովիչը, Ուիլյամ Սամները և ուրիշներ, ովքեր զարգացրեցին սոցիոլոգիան՝ դարձնելով գիտության առաջատար ճյուղ:
Հետագայում առաջացան նաև մի շարք այլ տեսություններ. Կ.Մարքսի դասակարգային պայքարը, Գեորգ Զիմմելի ֆորմալ սոցիոլոգիան, Մաքս Վեբերի «Հասկացող» սոցիոլոգիան, Էմիլ Դյուրկգեյմի սոցիոլոգիզմը, Վիլֆրեդո Պարետոյի էլիտայի տեսությունը, բիհեվիորիզմը, սիմվոլիկ ինտերակցիոնիզմը, նեոմարքսիզմը և մի շարք այլ մասնագիտական տեսություններ:
Սոցիոլոգիայի կառուցվածքում առանձնացվում են մակրո և միկրո սոցիոլոգիաները: Մակրոսոցիոլոգիան ուսումնասիրում է գլոբալ սոցիալական համակարգերը և պատմականորեն երկարատև գործընթացները, իսկ միկրոսոցիոլոգիան հետազոտում է մարդկանց ամենօրյա վարքը՝ միջանձնային անմիջական փոխազդեցության պայմաններում որպես հասարակական շարժում և մտածելակերպ:

Սոցիոլոգիայի և հասարակությունն ուսումնասիրող մյուս գիտությունների տարբերությունը կարելի է բնորոշել այսպես. երբ ուսումնասիրության օբյեկտը անձն է՝ իրավագետը անձին դիտարկում է որպես իրավունքի սուբյեկտ՝ որոշակի պարտականությունների և իրավունքների կրող, իսկ տնտեսական, հոգեկան, պատմական և այլն կողմերը գործոններ են, որոնք այս կամ այն կերպ ազդում են անձի իրավական նկարագրի վրա: Տնտեսագետի համար անձն

արտադրության սուբյեկտ է, հոգեբանի համար՝ հոգեկան երևույթների ու գործընթացների կրող: Սոցիոլոգը, ի տարբերություն մյուսների, անձին դիտարկում է որպես մի ամբողջություն, սոցիալական կյանքի կրող, որի նկարագրի վրա տարբեր չափով ազդում են իրավական, հոգեբանական, պատմական-բարոյական, քաղաքական և այլ գործոնները (Վ.Ա. Յադով):

Բերենք մի օրինակ ևս. *հոգեբանություն և սոցիոլոգիա՝* հոգեբանությունը կենտրոնացված է «ես»-ի ուսումնասիրության, իսկ սոցիոլոգիայի ուսումնասիրության ոլորտը «մենքն է»՝ միջանձնային փոխազդեցության հիմնահարցը:

Ավելի պարզ օրինակ է բերում Նեյլ Սմելզերը. ենթադրենք կինը չորս տոմս է գնում դեպի Հավայան կղզիներ, որտեղ ընտանիքի հետ պատրաստվում են անցկացնել երկշաբաթյա հանգիստը: Այս դեպքում, ըստ Սմելզերի, հոգեբանին հետաքրքրում է, թե կինը ինչու հենց Հավայան կղզիներն ընտրեց: Տնտեսագետը կդիտարկի, թե տոմսերը գնելուց բացի, կինը ուրիշ ինչ կերպ կարող էր փողերը ծախսել: Ի տարբերություն սոցիոլոգի, որը կդիտարկի, որ կա էլի երեք մարդ՝ ամուսինը և երեխաները, որոնք նույնպես ճամփորդության տոմս ունեն, օրինակ, կհետաքրքրվեր, թե ինչպես են նրանք ազդել կնոջ որոշման վրա:

Ժամանակակից սոցիոլոգիան ունի տարբեր ենթատեսակներ.

- գենդերային սոցիոլոգիա

- քաղաքային սոցիոլոգիա
- տարածաշրջանային սոցիոլոգիա
- մշակութային սոցիոլոգիա
- երիտասարդության սոցիոլոգիա
- գիտական սոցիոլոգիա
- քաղաքական սոցիոլոգիա
- կրթական սոցիոլոգիա
- իրավական սոցիոլոգիա
- հոգեբանական սոցիոլոգիա
- հասարակական կյանքի սոցիոլոգիա
- ընտանեկան սոցիոլոգիա
- կառավարման սոցիոլոգիա
- աշխատանքի սոցիոլոգիա
- տնտեսական սոցիոլոգիա
- էթնոսոցիոլոգիա
- էկոսոցիոլոգիա

Էթնոսոցիոլոգիա

Էթնոսոցիոլոգիան նոր գիտական ուղղություն է, որը ձևավորվել է ազգագրության և սոցիոլոգիայի միաձուլման հետևանքով անցած դարի 60-ականներին: Կազմված է երեք լատիներեն բառերից՝ ethnos – ցեղ, ազգ, ժողովուրդ, societas – հասարակություն և logos – ուսմունք: Շատ գիտություններ՝ փիլիսոփայությունը, պատմությունը, իրավագիտությունը, քաղաքագիտությունը նույնպես ուսումնասիրում են ազգային խնդիրները: Ինչո՞ւմն է նրանց և էթնոսոցիոլոգիայի ուսումնասիրությունների տարբերությունը: Էթնոսոցիոլոգիայի գիտական ուղղվածության ստեղծումը պայմանավորված էր գիտության և հասարակական կյանքի հետաքրքրություններով:

Սակայն՝ ի տարբերություն մնացածի, էթնոսոցիոլոգիան ուսումնասիրում է միայն հասարակական կարևորություն ունեցող մշակութային և կենցաղային երևույթները, ինչպես նաև՝ ազգային մշակույթի (լեզվի, ազգային սովորույթների, արժեքների, ազգային ինքնագիտակցության) փոփոխությունների պայմանավորվածությունը: Մի նախադասությամբ՝ էթնոսոցիոլոգիան ուսմունք է հասարակության ազգային պատկանելության մասին: Այն ուսումնասիրում է տարբեր ազգերի ծագման, էության, գործառույթների հետ կապված խնդիրները՝ ընդհանուր օրինաչափությունների բացահայտման, վերջիններիս փոխազդեցության ուսումնասիրման և այս ամենի հիման վրա հասարակական գործուն մեխանիզմների նպատակով:

Էկոսոցիոլոգիա

Որպես սոցիոլոգիայի ինքնուրույն ենթաբաժին՝ էկոսոցիոլոգիան (անգլերեն՝ environmental sociology) ձևավորվել է միայն 1992 թվականին: Դա պայմանավորված էր այդ նույն տարում Սոցիոլոգների Միջազգային Ասոցիացիայի Հետազոտությունների Կոմիտեի «Շրջակա աշխարհն ու հասարակությունը» բաժնի ստեղծմամբ: Էկոսոցիոլոգիայի տեսանկյունից՝ շրջակա աշխարհը հանդիսանում է միջանձնային փոխհարաբերությունների ենթատեքստ և արտացոլում: Էկոսոցիոլոգներն ուսումնասիրում են մարդու և բնության շփումը, հասարակության արժեքներն ու էկոլոգիական գիտակցությունը, էկոլոգիական շարժումը:

ՄԱՍ 2
ԿԻՐԱՌԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

Ինչպես արդեն նշվել է նախորդ մասում, սոցիոլոգիայի պատմության ժամանակակից փուլը ընդուված է սկսել Օգյուստ Կոնտից (1798-1857թթ.): Նա առաջինը անվանում տվեց սոցիոլգիային և որոշեց նրա առարկան ու մեթոդները: և գիտական հանրության կողմից այն ընդունեց որպես առանձին գիտություն: Կոնտն ապրում և գործում էր մի դարաշրջանում, որտեղ օբյեկտիվորեն հասարակության գիտական հետազոտման պահանջարկ առաջացավ: Կարևոր էր նաև այդ հետազոտությունների արդյունքներով հասարակության բարեփոխումների հիմնավորված իրականացումը: 18-րդ դարի վերջը և 19-րդ դարի առաջին կեսը հասարակական կյանքի արմատական փոփոխությունների ժամանակներ էին:

Դեռ 10-15 տարի առաջ հայաստանյան միջավայրում քչերը գիտեին, թե ինչ է սոցիոլոգիան, ինչպիսի հնարավորություններ ունի ազդելու հասարակական կյանքի վրա: Այսօր այդեն սոցիոլոգիա բառը շատերին է ծանոթ, շատեր են գործածում: Հեռուստատեսությունը, ռադիոն, թերթերը պարբերաբար անդրադառնում են սոցիոլոգիական հետազոտություններին, արդյունքներին, վիճակագրությանը:

Սոցիոլոգիայի կառուցվածքում կարելի է առանձնացնել տեսական սոցիոլգիա և գործնական սոցիոլոգիա:

2.1. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Մեթոդը տվյալների հավաքման և վերլուծության հիմնական եղանակն է: Ուսումնասիրությունների ընթացքում առավել շատ կիրառվում են հարցման՝ հարցաթերթիկով հարցում (անկետավորում), հարցազրույց, դիտման, փաստաթղթերի վերլուծության, ֆոկուս խումբ մեթոդները:

Հետազոտության ընթացքում կախված նպատակից և ուսումնասիրվող օբյեկտի առանձնահատկություններից՝ օգտագործում են այս մեթոդներից մեկը կամ մի քանիսը: Սոցիոլոգիայում տեղեկատվության հավաքման համար նախատեսված մեթոդները բաժանվում են երկու խմբի՝ քանակական ու որակական: Քանակական մեթոդները հիմնվում են օբյեկտիվ և ճշգրիտ տեղեկատվության վրա: Ֆիքսվում է հետազոտության ընթացքը: Այս մեթոդների միջոցով ստացվում են տվյալներ, որոնք արտահայտված են լինում թվերի, տոկոսների տեսքով: Այսինքն՝ այստեղ հետազոտողը նպատակ է հետապնդում մեկնաբանել երևույթը թվերի միջոցով: Քանակական մեթոդների շարքին կարելի է դասել հարցման մեթոդը, դիտման մեթոդը և փաստաթղթերի վերլուծությունը: Որակական մեթոդները հիմնվում են որակական մեթոդաբանության վրա: Այս մեթոդի կիրառման ընթացքում տիրող մթնոլորտը ոչ թե պաշտոնական է, այլ ընկերական: Այս տիպի մեթոդներով ստացված տեղեկատվությունը թվային արտահայտում չի ստանում: Մեթոդի նպատակն է իրավիճակի մեկնաբանումը հարցվողների տեսանկյունից հասկանալը: Որակական մեթոդների շարքին են դասվում հարցազրույցի, ֆոկուս խմբերի մեթոդները:

Դիտման մեթոդ

Մեթոդի անունն ինքնին հուշում է, որ այս մեթոդի հիմքում ընկած է դիտելու, նայելու միջոցով տեղեկատվություն հավաքելու գաղափարը: Դիտման մեթոդը օգտագործվում է հիմնականում նախնական տեղեկատվություն հավաքելու համար, երբ պետք է պարզել ընդհանուր պատկերը

ուսումնասիրվող երևույթի մասին: Սովորաբար այս մեթոդն օգտագործվում է երկու դեպքում. 1. երբ որոշակի պատկերացում ունենք հետազոտվող երևույթի մասին, բայց մեր ունեցած պատկերացումը շատ հեղհեղուկ է, մակերեսային և ունի ճշգրտման կարիք, 2. երբ տվյալ երևույթի մասին մենք ընդհանրապես տեղեկատվություն չունենք:

Դիտման ընթացքում կարևոր է, որ դիտում անցկացնող մարդը գրառումներ անելիս իր կարծիքը չարտահայտի, այլ տեսածի փաստացի արձանագրում կատարի, լինի օբյեկտիվ: Այս մեթոդի էությունն այն է, որ մարդու վարքը և նրա ակտիվության դրսևորումները ընկալում և գրանցում են նրա կենսագործունեության ամենատարբեր բնագավառներում, երևույթների զարգացմանը համընթաց: Դիտման մեթոդը մեզ չի տալիս տվյալներ այն մասին, թե ինչու է մարդը կատարում դիտվող գործողությունները: Սա պարզելու համար անհրաժեշտ են այլ հետազոտություններ:

Հարցման մեթոդ

Հարցումը առավել տարածված սոցիոլոգիական մեթոդներից է: Հարցման առանձնահատկությունը կայանում է նրա մեջ, որ հետազոտության ժամանակ կարևորն ընդհանրական պատկերն է, այլ ոչ թե կոնկրետ հարցվողի պատասխանը: Սրանով էլ հարցման մեթոդը տարբերվում է հարցազրույցից, որտեղ կարևոր է հենց հարցազրույց տվող մարդու տեսակետը: Հարցման մեթոդը կիրառելիս հետազոտողը մշակում է իրեն հետաքրքրող երևույթի վերաբերյալ հարցեր և ներկայացնում դրանք հետազոտվողին:

Հարցումները լինում են անմիջական և հեռակա, այսինքն՝ կարող է լինել և վերբալ հարցում, և էլեկտրոնային հարցում: Հարցման տեսակներ են հացաթերթիկով հարցումը (անկետավորում), հեռախոսային հարցումը, ահատական և խմբային, փոտային և *փորձարարական (պիլոտաժային)*՝ հարցումը: Այս հարցման ընթացքում փրձարկվում է հարցաթերթիկը, հարցերի մատչելիությունը: Նախնական փորձարկման փուլը կազմում է բուն հետազոտության 5%-ը: Ստացված տեղեկատվությունը կարելի է ամփոփել ընդհանուր հարցման արդյունքների հետ: Հարցման այս փուլից հետո հարցաթերթիկը՝ բուն հրցաշարը հնարավոր է փոփոխություններ կրի:

Հարցազրույցի մեթոդ

Հարցազրույցի մեթոդը դասվում է որակական մեթոդների շարքին: Հարցազրույցի ժամանակ կարևոր է հետազոտողի անմիջական և ազատ շփումը հետազոտվողի հետ, որի շնորհիվ բացահայտվում է հետազոտվողի դիրքորոշումը ուսումնասիրությանը երևույթի նկատմամբ: Հետազոտության ժամանակ կարող է ներկայացված լինել ինչպես մի անձի, այնպես էլ մի քանի անձանց հարցազրույցները: Ընդ որում, երկրորդ դեպքում ավելի մեծ է օբյեկտիվ լինելու և հետազոտվող խնդիրը մի քանի տեսանկյունից ներկայացնելու հնարավորությունը:

Փաստաթղթերի վերլուծության մեթոդ

Փաստաթղթերի վերլուծության մեթոդը սոցիոլոգիայում լայնորեն տարածված մեթոդ է: Վերջինս կարող է օգտագործվել

ինչպես տեղեկատվության հավաքման հիմնական, այնպես էլ լրացուցիչ աղբյուր՝ զուգակցվելով որևէ այլ մեթոդի հետ: Պարզենք, թե ինչ է նշանակում փաստաթուղթ: Ընդունված է, որ փաստաթուղթ ասելով հասկանում ենք ցանկացած տիպի տեղեկատվություն, որը արձանագիված է տպագիր կամ ձեռագիր տեքստում, ֆոտո կամ աուդիո կրիչի վրա: Այս սահմանման հիման վրա կարելի է դիտարկել փաստաթղթերի տարբեր տիպեր՝ էլեկտրոնային և թղթային, փակ կամ բաց արխիվի պատկանող և այլն: Փաստաթղթերի վերլուծության մեթոդի լայն տարածումը կապված է մի քանի խնդիրների շրջանցման հետ: Այս մեթոդն ավելի քիչ ժամանակատար է, չի պահանջում մեծ ֆինանսական ու մարդկային ռեսուրսներ, սոցիոլոգը չի շփվում խոցելի խմբի՝ մարդկանց հետ և կարողանում է ազատ կերպով կազմակերպել իր ժամանակը:

Ֆոկուս խումբ

Ֆոկուս-խումբն (անգլերեն՝ focus group) ուսումնասիրման գործընթաց է, որն անցկացվում է ինչ-որ թեմայի խմբակային քննարկման ժամանակ: Ներկայացնում է քննարկմանը մասնակցող մի խումբ մարդկանց կարծիքներն ու դիրքորոշումները:

2.2. ՀԱՐՑԱԹԵԹԻԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՐՑԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հրցաթերթիկը կառուցված է կոչ դիմումից, որտեղ համառոտ նշվում է հետազոտության նպատակն ու խնդիրները, ում կողմից է կազմակերպել այն, հարցաթերթիկի լրացման

կնոններից, որտեղ նշվում է, թե ինչպես պետք է լրացնել հարցաթերթիկը, բուն հարցաշարից, որտեղ նշվում են հարցման թեմային վերաբերվող հարցերը և անձնագրային մասից, որտեղ նշվում է հարցվողի սեռը, տարիքը, կրթությունը և այլ անձնական հարցեր:

Հարցերը լինում են բաց, փակ, կիսափակ: Բաց հարցը չի ենթադրում պատասխանների տարբերակների առկայություն: Փակ հարցերը երբեմն անվանում են ձևայնացված հարցեր, քանի որ հնարավություն են տալիս ընտրել հնարավոր տարբերակնեից. պատասխանները նախօրոք նախատեսված են և բերված են հարցաթերթիկում: Կիսափակ հարցերը թույլ են տալիս նշել սեփական պատասխանը եթե առաջարկված ոչ մի պատասխանի հետ հարցվողը համաձայն չէ: Կիսափակ, ինչպես և բաց հարցերը ավելի դժվար է մշակել, քան փակ հարցերը, քանի որ ազատ դիրքի պատասխանները հարկ է լինում խմբավորել և կոդավորել:

Հարցերը բաժանվում են տարբեր տեսակների. *հիմնական հարցեր,* որոնք ուղղված են հետազոտության թեմայով բովանդակային տեղեկություններ ստանալուն, *հարց-զտիչներ*, որոնք օգտագործվում են անիրազեկներին և որոշ հարցերի հետ չառնչվող անձանց մաղելուն ներգրավվելու հարցման թեմայի մեջ, *ներածական և անցումային*, ինչպես նաև *զտիչ* հարցեր:

Ըստ իրենց բովանդակության հիմնական կամ նպատակային հարցերը բաժանվում են հետևյալ խմբերի. *փաստական* բնույթի, որոնք տեղեկություններ են հարցվողների սոցիալ-ժողովրդագրական տվյալների սեռի, տարիքի, մասնագիտության և այլնի մասին՝ այն է անձնագրային մաս:

Փաստերը կարող են լինել նաև գործունեության ու կյանքի ցանկացած ոլորտի վերաբերյալ: *Տեղեկատվական,* որոնք նախատեսված են հարցվողների իրազեկությունները, գիտելիքների մակարդակը պարզելու համար: Այս հարցերը չի կարելի ուղղակիորեն ձևակերպել. այստեղ ներկայացվում է մի մտացածին, հնարովի իրավիճակ, և խնդրում են հարցվողին դրսևորել սեփական վերաբերմունքը:

2.3.ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ, ԸՆՏՐԱՆՔԸ

Սոցիոլոգիական հետազոտությունը բաղկացած է հինգ հիմնական փուլերից. 1. Նախապատրաստական փուլ, 2. դաշտային կամ առաջնային տեղեկատվության ստացման փուլ, 3. հավաքված տեղեկատվությունը մեքենայական մշակման նախապատրաստելու փուլ, 4. Տեղեկատվության մշակման փուլ, 5. Վերլուծության և արդյունքների մեկնաբանման փուլ: Հինգ փուլերն էլ անհրաժեշտ են քանակական և հատկապես որակական հետազոտությունների համար: Երբեմն քանակական հետազոտության ժամանակ տեղեկատվություն 3-րդ փուլի՝ մեքենայական մշակման նախապատրաստելու անհրաժշտություն չի լինում, երբ գործ ենք ունենում մեկ անձի, մեկ դեպքի հետ: Նախապատրատական փուլում ստեղծվում է սոցիոլոգիական հետազոտման ծրագիրը և կազմվում է աշխատանքային պլան: Հետազոտության ծրագիրը այս բոլոր փուլերի տեսական-մեթոդական հիմքն է: Ծրագրի բովանդակությունը կախված է հետազոտության ընդհանուր ուղղվածությունից, գլխավոր նպատակից: Հետազոտության մեջ հաջողություն ունենալու համար, պետք է մշակել մանրակրկիտ ու հստակ մշակված ծրագրի: Սոցիոլոգիական

հետազոտության ծրագիրը բաղկացած է երկու մասից. 1. մեթոդաբանական, 2. ընթացակարգային: Մեթոդաբանական բաժինը ներառում է. հիմնահարցի ձևակերպումը, հետազոտության առարկայի և օբյեկտի որոշումը, հետազոտության նպատակի որոշումը և խնդիրների առաջադրումը, հիմնական հասկացությունների ճշգրտումը և մեկնաբանությունը, հետազոտության օբյեկտի նախնական համակարգային վերլուծությունը, աշխատանքային վարկածների ծավալումը: Ընթացակարգային (աշխատանքային պլան) բաժինը ներառում է. հետազոտության սկզբունքային (ռազմավարական) պլանը, դիտարկման միավորների ընտրման համակարգի հիմնավորումը, ելակետային տվյալների հավաքման և վերլուծության հիմնական ընթացակարգերի ուրվանկարը:

Ընտրանքը սոցիոլոգիայում

Հետազոտության գլխավոր համախումբը կազմում են տասնյակ, հարյուր հազարավոր, երբեմն միլիոնավոր մարդիկ: Նրանց համատարած հետազոտումը կապված է ահռելի նյութական միջոցների և ժամանակի հետ: Այդ իսկ պատճառով նպատակահարմար են ընտրովի հետազոտությունները, որոնք թույլ են տալիս օպերատիվ կերպով և անհամեմատ ավելի քիչ միջոցներ ծախսերով, բավարար դատողություններ անել գլխավոր համախմբի մասին: Սակայն ամբողջի մասին դատելը, նրա որևէ մասի հետազոտման արդյունքների հիման վրա դառնում է վիճակագրական սխալների աղբյուր: Այդ սխալների մեծության և հետևությունների հուսալիության որոշումը սոցիոլոգիական տեղեկատվության վիճակագրական մշակման բաղադրամասերից է: Ընտրանքը կազմելիս, ելնելով

հետազոտման ծրագրի նպատակից և խնդիրներից, հաշվի է առնվում հարցվողների թիվը, սեռը, տարիքը, կրթությունը, զբաղվածությունը և այլն:

Մաս 3

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սոցիոլոգիայի մեթոդները միայն տեսական գիտելիք ստանալով հնարավոր չէ յուրացնել և լիարժեք կիրառել: Կարևոր դեր ունի սեփական սոցիոլոգիական ուսումնասիրություն կատարելը:

Հետազոտություն անցկացնողին կարևոր է իմանալ, որ հարցվողի (ռեսպոնդենտ) հետ հարաբերություններում սոցիոլոգը խստորեն պետք է ապահովի գաղտնիություն, նրա հայտնած տեղեկությունները անձնավորված չհրապարակի, բացառությամբ այն դեպքերի, երբ ծրագրով հրապարակումը նախատեսված է: Եվ այս մասին ռեսպոնդենտը ժամանակին տեղյակ է պահվել: Հիմնականում հարցումների արդյունքները կիրառվում և հրապարակվում են ընդհանրացված ձևով: Սոցիոլոգիական գործունեության համար կարևոր է այն, որ թույլ չտրվի այնպիսի մեթոդի, տեխնիկայի, ընթացակարգի օգտագործում, որը կվնասի հետազոտվողի շահերը, կկպչի նրա անձնական արժանապատվությանը:

Համացանցում ներկայացված շատ սոցիոլոգիական ուսումնասիրություններ նեղ մասնագիտական են և կարծում եմ՝ սովորողի համար ոչ այնքան հետաքրքիր: Այդ իսկ

պատճառով ներկայացնում ենք կրթահամալիրի սովորողների և դասավանդողների կատարած հաջող հետազոտությունները, որոնք կարող եք դիտարկել որպես ուսումնասիրության օրինակներ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի www.mskh.am, «Վիճակագիր» էջում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ցանկում նշված են աղբյուրներ, որոնցից աշխատանքը՝ ձեռնարկը ազդեցություն է կրել:

1. Ядов В.А. Социологическое исследование: методология, программа, методы
2. Реферат: История социологии
3. Краткий обзор социальных учений до выделения социологии в самостоятельную науку
4. Предмет этносоциологии
5. Экологическая (энвайронментальная) социология
6. Կրավչենկո Ս.Վ., ,Սոցիոլոգիայի հիմունքներեր
7. Է. Ա. Կյուրեղյան, Կիրառական սոցիոլոգիա
8. Փաստաթղթերի վերլուծություն
9. Տեղեկատվության հավաքման մեթոդները սոցիոլոգիայում